ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Մեր ընթերցողներին արդէն լաւանի է որ Թիֆլիսում մօտ երկու տարի է գոյութիւն ունի Միքայէլեան կամուրջի վրայ Հայոց Էժանագին Գրադարան [1]), որը, ինչպէս հաստատ աղբիւրից լսել ենք, շուտով կ'ունենայ և Ընթերցարան։ Այդ վերին տարիճանի համակրելի հաստատութեան նշանակութեան մասին մի անգամ խօսած լինելով այժմ խոյս կը տանք կրկնութիւններից և կ'աշխատենք, որքան հանգամանքները ներում են մեզ, ծանօթացնել նորա անցեալ տարուայ գործունէութեան մի քանի կէտերի հետ և այն մի քանի խնդիրների որ ծագում են այժմ։

1891 թվի յունուարի 1-ից մինչև 1892 թվի յունուարի 1-ը գրադարանից օգտուել են 580 բաժանորդ, որոնցից համարեա $^1/_2$ դաստուցիք էին, իսկ մնացածները Թիֆլիսեցիք։ Բաժանորդներից միայն 80 հոգի էին իգական սեռից։ Որպէս զի աւելի պարզ լինի թէ մեր հասարակութեան ինչ խաւերի ընթերցասիրութեան պահանջներն է լրացնում իւր գոյութեամբ այդ գրադարանը՝ մենք առաջ կը բերենք բաժանորդների աւելի մանրամասն ցուցակը։

ԱՐԱԿԱՆ ՍԵՌ

1. Աշակերտներ	294	հոգի
2. Գործակատարներ	59	»
3. Արհեստաւորներ	41	»
4. Վաճառականներ	33	»
5. Մտաւորներ	19	»
6. Առանց պարապմունքի երիտասարդներ	14	»
7. Մանր պաշտօնեաներ	10	»
8. Մշակներ	8	»
9. Դերասաններ	6	»
10. Ուսուցիչներ	5	»
11. Ուսանողներ	4	»
12. Կառապաններ	2	»
13. Քահանայ	2	»
14. Ֆելդշեր	2	»
15. Զինուոր	1	»
Ընդամենը	500	հոգի

---

[1]) Տես «Մուրճ» 1890 թ., № 12, եր. 1636—1645։

ԻԳԱԿԱՆ ՍԵՌ

1. Աշակերտուհիներ.	33	հոգի
2. Օրիորդներ	29	»
3. Կանայք	16	»
4. Վարժուհիներ	2	»
Ընդամենը . .	80	հոգի

Ինչպէս տեսնում էք օգտուողների մեծ մասը (56%) սովորողներ են, այն էլ այնպիսի ուսումնարաններից, ուր համարեա բացառապէս չքաւոր ծնողների զաւակներ են ուսանում, այսինքն Ներսիսեան դպրոցից, Միքայ. արհեստաւորաց, քաղաքային, հայոց ծխական, տեխնիկական և ալեքսանդրեան ուսումնարաններից. Երկրորդ տեղն են բռնում գործակատարներ, արհեստաւորներ և վաճառականներ (23%). Վերև բերած օրիորդ և կին բաժանորդների թիւը (8%) գլխաւորապէս կազմած է նոյն դասակարգի աղջկերանցից և կանանցից. Շատ քիչ են ընթերցողներ ծառաներից, մշակներից, կառապաններից և առհասարակ տնտեսապէս ամենաստոր վիճակի մէջ գտնուող խաւերից, և զարմանալի էլ չէ. այդ խաւերում գրագիտութիւնը շատ քիչ է տարածուած. տնտեսական թշուառութիւնը միայն մարդուս ֆիզիկականի վրայ չի ազդում, այլ և հոգու ու մտքի վրայ են ծանրանում. Տնտեսապէս լաւ պայմաններում գտնուողներից և ինտելիգենցիայից բաժանորդներ համարեա չը կան. Պատճառը հասկանալի է. նախ՝ դրանք միջոց ունեն ձեռք բերել այն մի քանի տասնեակ գրուածները որ կան մեր աղքատ գրականութեան մէջ և երկրորդ՝ որ ինչպէս շատ քիչ մտաւոր սնունդ կայ նրանց համար մեր ընթերցանական գրականութեան մէջ. իսկ նոքա, որոնք մասնագիտական աշխատանքների համար կ'ուզենային օգտուել այդ գրադարանից՝ ի հարկէ շատ քիչ բան կը գտնէին այնտեղ, քանի որ նորա նպատակը բոլորովին այլ է. Մասնագէտների պահանջներին կարող էր գոհացում տալ մի ընդարձակ, ճոխ հայկական գրադարան, որի մէջ ամփոփուած լինէին ոչ միայն հայոց հին և նոր ամբողջ գրականութիւնը՝ այլ և այն բոլոր օտար գիտնական աշխատութիւնները, որ հայագիտութեան և արևելագիտութեան են վերաբերում. Այդ տեսակ հիմնարկութեան մասին շատ խօսեց Կ. Հ. Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովում մի երկու տարի առաջ, սկզբունքով ընդունեց առաջարկը. և յատկացրեց տարեկան չնչին գումար, իսկ գործի իրականացումը թողեց Լետա գետի ալիքներում...

Էժանագին գրադարանի բաժանորդագինը այնքան չնչին է, ամսական 20 կոպէկ, որ մատչելի է ահագին մեծամասնութեան, իսկ որոնք այդ էլ չեն կարող վճարել՝ ձրի են օգտւում. Բայց մատչելիութիւնը գնի կողմից դեռ բաւական չէ որ ընթերցասիրութիւնը աւելի խոր արմատներ գցի և աւելի լայն կերպով տարածուի. դրա համար հարկաւոր է, որ

գրադարանը տալ բաւականաչափ առատ և առողջ մտաւոր սնունդ էր, որ նա հարուստ լինի ընթերցանութեան գրքերով. մի պահանջ, որ կարելի է դնել մի հասարակութեան, աչքի առաջ և ոչ մի հաստատութեան որ ունի այն, ինչ գոյութիւն ունի իւր աղքատիկ մայրենի գրականութեան մէջ. Մի տասը կամ տասն և հինգ տարի առաջ այնքան սակաւ էին մեզ մօտ ընթերցանութեան գրքեր որ եղած պաշարը հազիւ մի երկու շաբաթւայ նիւթ տար ընթերցողին. Այդ ժամանակամիջոցում թէև ընթերցանութեան գրքերի թիւը զգալի կերպով աւելացել է, բայց այնու ամենայնիւ այդ թիւը դեռ շատ է չնչին. Կարելի է ասել որ Էժանագին Գրադարանում ամփոփուած է մեր արդի գրականութեան բոլոր հարստութիւնը և բանից ինչ է դուրս գալիս. եղած չ'եղածը ինչ որ կարող է առաջարկել մեր նոր գրականութիւնը իւր ընթերցողներին—մօտ 770 անուն գիրք է, որոնցից կարդացւում են 400-ը, իսկ մնացածները կամ այնքան են հետաքրքրում, որ ցանկացող չը կայ նրանց բաց անելու կամ եթէ համարձակներ պատահում են՝ դրանց թիւը 2—3-ից աւել չէ լինում. Քանի որ գործերի դրութիւնը այս է, հասկանալի է թէ որչափ նպատակայարմար է ձգտումը Հրատարակչական Ընկերութեան կամ մասնաւոր ձեռնարկողների կողմից՝ ճոխացնել ընթերցանական գրականութիւնը.

Մանկական-պատանեկական գրքերից, ինչպէս ցոյց է տալիս Էժանագին գրադարանի անցեալ տարուայ փորձը, աւելի՛ կարդացւում են Հոֆմանի, Շմիդտի, Աղայեանի, Վուչանսկի, Ժիւլ-Վերնի, Անդերսէնի, Աւենարիուսի, Բիչէր Ստոուի, Ամիչիսի և Ալֆոնս Դոդէի գրուածքները. Մեր գրականութեան մէջ հազիւ 100 գիրք կարելի է հաշւել մանկական—պատանեկական ընթերցանութեան համար. Լուրջ քննադատութիւնը գուցէ այդ թիւը դեռ աւելի եւս պակասեցնէր. Մանկական-պատանեկական ընթերցանութեան գրքերի մի «քննադատական ցուցակի կամ ուղեցոյցի» պահանջը շատ զգացւում է մեզ մօտ. սակայն դրա կազմելը վեր է մի անհատի ուժերից. Պէտք է հասարակական ուժերով գլուխ բերել այդ գործը. Դիտողութիւններ թէ ինչպէս է կարդացւում, և հասկացւում մի գիրք, ինչ տպաւորութիւն է թողնում, որքան յարմար կամ անյարմար է նա՝ աւելի միջոց ունեն անելու մեր ուսումնարանների ուսուցիչները և վարժուհիները, որոնք, իբրև ուղեցոյց այդպիսի դիտողութիւնների, կարող են աչքի առաջ ունենալ Խարկովի իգական կիրակնօրեայ ուսումնարանի վարժուհիների հռչակաւոր „Что читать народу?" աշխատութիւնը. Մանկական—պատանեկական ընթերցանութեան գրքերի մասին այդպիսի նիւթեր աւելի հեշտ է հաւաքել ուսուցիչներին, և վարժուհիներին, որոնք միշտ մօտ շփում ունեն բազմաթիւ սովորողների հետ. Զանազան կողմերի հաւաքած տեղեկութիւնները և դիտողութիւնները կարող են ուղարկել մի խմբի, անձի, խմբագրութեան կամ հիմնարկութեան համեմատելու, քննելու, խմբագրելու և հրատարակելու ի հարկէ

աւելի լաւ կը լինէր որ մի խումբ ուսուցիչներ և վարժուհիներ հէնց իրանք ձեռնարկէին այդ գործը։

Ինչ վերաբերում է չափահասների ընթերցանութեան գրքերին՝ նոցա նիւթն էլ բաւական սահմանափակ է։ Ահա մի տարում գլխաւորապէս ինչ գրքեր են կարդացել։

Ռաֆֆի՝	6	օրինակ	Լալծեր	վերցրած է 113	անգամ
	3	»	Դաւիթ բէգ	» 97	»
	4	»	Ղարաբաղի աստղագէտը .	» 94	»
	3	»	Զալալէդդին	» 93	»
	4	»	Խենթ.	» 91	»
	2	»	Խաչագողի յիշատակարանը	» 85	»
	3	»	Սամուէլ	» 84	»
	2	»	Ոսկի աքաղաղ.	» 62	»
	8	»	Փունջ	» 56	»
	2	»	Մինը ալսպէս միւսը ալնպէս	» 50	»
	1	»	Խամսայի Մելիքութիւնները	» 36	»
	2	»	Հալ կինը և հալ երիտաս.	» 34	»
	2	»	Պարոյր Հալկաղն. . . .	» 33	»
	1	»	Ղարիբ Մշեցի.	» 19	»
	1	»	Ճանապարհ. Թիֆլ. մինչև Ադուլ.	» 13	»
Մերենց՝	2	»	Թէոդորոս Ռշտունի. . .	» 62	»
	3	»	Թորոս Լեռնի	» 60	»
	1	»	Երկունք	» 38	»
	1	»	Կաթողիկոս. և Խրիմեան հայրիկ	» 7	»
Աղալեան՝	5	»	Արեգնազան.	» 65	»
	2	»	Արութիւն և Մանուէլ. .	» 55	»
	3	»	Երկու քոյր	» 35	»
	3	»	Անահիտ	» 30	»
	1	»	Բանաստեղծութիւններ .	» 20	»
	4	»	Տօրք Անդեղ.	» 12	»
Պռոշեան՝	2	»	Շահէն	» 47	»
	1	»	Բղդէ.	» 43	»
	3	»	Ցեցեր	» 40	»
	2	»	Կռուածաղիկ.	» 34	»
	2	»	Սօս և Վարդիթեր . . .	» 31	»
	2	»	Հացի խնդիր	» 21	»
	1	»	Աղասի	» 8	»
Շիրվանզադէ՝	2	օր.	Զուր յոյսեր	» 62	»
	3	»	Արամբին	» 56	»
	3	»	Խնամատար	» 38	»

2 » Գործակատարի վիշտակարանը » 33 »
2 » Նամուս. . . . . » 29 »
Պարոնեան՝ 2 օր. Մեծապ. մուրացկաններ (օգոստ. ամսից) 40 »
1 » Խիկարի գուշակութիւն. (սեպտ.)» 15 »
Ռ. Պատկանեան՝ 5 օր. Տիկին և նաժիշտ . » 26 »
1 » Ես նշանած էի. . . . . » 22 »
4 » Բանաստեղծութիւններ . » 14 »
Խրիմեան Հայրիկ՝ 1 օր. Սիրաք և Սամուէլ » 14 »
1 » Դրախտի ընտանիք. . . » 10 »
1 » Յիսուսի վերջին շաբաթը » 9 »
2 » Վանգուժ . . . . » 8 »
Տիւսաբ՝ 3 » Վարժուհի. . . . . . . » 34 »
1 » Մայտա. . . . . » 14 »
1 » Սիրանոյշ. . . . . . . » 13 »
Մ. Նալբանդեան՝ 1 օր. Թալիսմաններ (Հիւսիս.) » 17 »
Գ. Արծրունի՝ 2 օր. Այնտեղ և այստեղ . . » 15 »
1 » Էւէլինա (Նովելներից) . » 4 »
Ար. եպ. Սեդրակեան՝ 1 օր. Ամուսնակ. խնդիրներ » 14 »
Սունդուկեան՝ 1 օր. Խաթաբալա . . . . » 29 »
2 » Պեպո. . . . . » 19 »
1 » Էլի մէկ զոհ. . . . . . » 10 »
Ղ. Ալիշան՝ 1 օր. Յուշիկք Հայրենեաց. . . » 10 »
Սրուանձտեան՝ 1 օր. Համով հոտով . . . » 11 »
Նաթանեան՝ 1 օր. Արտօսր Հայաստանի. . » 9 »
Լեոն Սարգսեանց՝ 2 օր. Այց թիւրք. Հայաստան. 83 »
Գալստանեան՝ 1 օր. Հայոց պատմութիւն . « 12 »
Խորենացի՝ 1 օր. Հայոց պատմութիւն . . . . » 11 »
Եղիշէ՝ 5 օր. Վարդան. պատեր. (աշխ.). . » 14 »
Ագաթանգեղոս՝ 1 օր. Հայոց պատմութիւն » 5 »
Արք. Յովհաննիսեան՝ 3 օր. Հայը և Հայաստանը օտարների աչքում. . . » 10 »
2 օր. Հայ ազգի կատաղի թշնամիները » 5 »
2 » Կեանքի պատկերներ . . . . » 5 »
Փիրումեան 2 » Պատկերներ Վասպ. կեանքից. » 11 »
3 » Խրիմեան Հայրիկ. . . . . . » 5 »
Արպետեան 2 » Խև Կարապետ . . . . » 17 »
Վ. Փափազեան 3 » Գինեգործի աղջիկ. . » 20 »
9 » Ենիչերի. . . . . » 15 »
3 » Լալօ. . . . . » 13 »
1 » Պատկերներ թիւրքահայոց կեանքից » 7 »

4 » Թոփալ . . . . » 5 »
Ա. Նամալեան՝ 3 օր. Նւազած կեանքը . . » 33 »
3 օր. Եզիդ աղջիկը . . . . » 30 »
3 օր. Ծանր քարը. . . . . » 22 »
3 օր. Հարսանիներ . . . . » 15 »
3 օր. Մեր ինչը կը պակսի . . . . » 13 »
Լէօ 2 » Կորածներ. . . . . » 17 »
3 » Արնագին. . . . . » 12 »
1 » Ծայրեր. . . . . » 11 »
1 » Վահան Մամիկոնեան. . . . » 5 »
2 » Վէպ թէ պատմութիւն . . . » 5 »
2 » Պանդուխտ . . . . » 5 »
Արփիար Արփիարեան 2 » Ապուշը . . . » 7 »
Փիլոյեան 2 » Կորած Մարգարիտ. . . . » 50 »
Կռօ 1 » Արտաւազդ և Մարգարիտ . . » 28 »
Մելիք-Շահնազարեան 1 » Հայ գիւղացու սև օրը . . . . » 11 »
Ս. Հախումեան 2 » Մանիկ . . . . » 8 »
Գ. Զուբար 1 » Պատկերներ. . . . . . . » 15 »
Կամսարական 1 » Վարժապետի աղջիկը. » 16 »
Միանսարեան 1 » Քնար հայկական. . . » 28 »
Ս. Շահազիզեան 1 » Լևոնի վիշտը. . . » 7 »
3 » Հրապարակախօս ձայն . . . » 7 »
Գ. Բարխուդարեան 2 » Բարեպաշտ մարդիկ » 13 »
Տատուրեան 1 » Բանաստեղծութիւններ. » 11 »
Բալուղեան 1 » Բանաստեղծութիւններ. . » 9 »
Յ. Յովհաննիսեան 1 » Բանաստեղծութիւններ » 9 »
Սայաթ-Նովա 2 » Երգեր. . . . . » 7 »
Ջիվանի 4 » Աշըղ Ղարիբի հէքիաթը . . » 13 »
1 » Քեարամի և Ասլիի հէքիաթները » 7 »
Լեռենց 1 » Բանաստեղծութիւններ . . . » 11 »
Թումանեան 1 » Բանաստեղծութիւններ. . » 4 »

Պետերբ. հայ ուսանողների ժողովրդական գրքոյկները բաւականին կարդացւում են։

Օտար գրականութիւնից կարդացել են։

Էժէն Սիւ 1 » Թափառական հրէայ. . . » 52 »
1 » Դի-աբինակ բլուր. . . . . . » 16 »
1 » Գաղտնիք Պարիզու. . . . . » 11 »
Վ. Հիւգօ 3 » Մահապարտի վերջին օրը. . » 42 »
1 » Թշւառներ. . . . . » 22 »

	2	» Կլօդ Գէօ	»	10	»
	1	» Անջելօ.	»	9	»
	1	» Նօտր դամ Պարիզի	»	7	»
Ջախեր Մազօխ՝	3	Կայէնի կնիքը (Թ. Րաֆֆի)	»	42	»
Էմ՝	3	» Լուսադիմին (ակադեմիկներից).	»	40	»
	1	» Հազար ու մի գիշերներ . . .	»	35	»
Գ. Հաւպտ՝	3	Նունցայի բերդը	»	26	»
	2	» Բեամթրիչէ	»	10	»
Սմայլս՝	3	» Խնայողութիւն.	»	33	»
	2	» Բնաւորութիւն.	»	20	»
Լեսսինգ՝	1	» Նաթան իմաստուն	»	9	»
Շիլլեր՝ [1])	1	» Դոն Կարլոս	»	13	»
	3	» Օրլէանի կոյսը.	»	34	»
	2	» Աւազակներ.	»	27	»
	3	» Վիլհէլմ Թել	»	17	»
Շէքսպիր՝	2	» Համլէտ.	»	19	»
	1	» Լիր	»	17	»
	2	» Օթելլօ	»	11	»
	1	» Ջուր տեղ մեծ աղմուկ. . . .	»	6	»
	1	» Ռոմէօ և Ջուլիետտա.	»	5	»
Գեօթէ՝	1	» Կլավիգօ	»	17	»
	1	» Վերթեր	»	9	»
Վալտէր Սկօտտ՝	1	» Իվանհօէ	»	10	»
Մօլիեր՝	1	» Տարտյուֆ.	»	8	»
	2	» Բռնի ամուսնութիւն. . . .	»	5	»
Դիկկենս՝	5	» Արբեցողի մահը.	»	8	»
Ռընան՝	3	» Իսլամութիւն և գիտութիւն .	»	7	»
Լերմօնտօվ՝	1	» Դեւ.	»	7	»
	1	» Դիմակահանդէս	»	12	»

Աչքի անցնելով այս ցուցակը հեշտ է համոզուել որ այդ գրքերի առաջին մասը վերջին 10—15 տարիներս են լոյս տեսել. թէ որ ստոյգ հետաքրքրական բովանդակութեամբ գրքերը տարածում են ընթերցասիրութիւնը՝ դրան ապացոյց է Րաֆֆին իւր վէպերով, և նա դեռ երկար ժամանակ կը մնայ մեր ամենաժողովրդական գրողը։

Ջախահաս ընթերցողներին սովորաբար բաժանում են երկու որոշ կարգի. առաջինը՝ հասարակ գրագէտ կամ միջինից ստոր կրթութիւն ունեցողներ և երկրորդ, միջին կամ դորանից բարձր կրթութիւն ստացածներ,

[1]) Նկատելու արժանի երևոյթ է, որ անցեալ տարուայ Թատրոնի գոյութեան շնորհիւ աւելի են կարդացուել Թատրոնական գրուածքներ քան 1890 թուականին.

ինտելիգենցիա։ Շատ գրքեր, որոնք գրուած են երկրորդ կարգի ընթերցողների հասկացողութեան համեմատ, առաջին տեսակի ընթերցողները, այսինքն ժողովրդի մեծ մասը, չեն կարողանում հասկանալ յայտնի պատրաստութիւն չ'ունենալու պատճառով։ Այստեղից յառաջ է գալիս բուն «ժողովրդական» գրքերի պահանջը։ Որոշելու համար մեր ժողովրդական ընթերցանութեան համար գրքերի տիպը՝ պէտք է իմանալ թէ մեր ժողովուրդը ինչ բովանդակութեամբ և ձեւով գրած գրքեր է հաւանում, ինչ է կարդում, ինչպէս է կարդում, ինչպէս է ըմբռնում կարդացածը, ինչ պահանջներ է անում և այլն։ Առանց ուսումնասիրութեան և ճիշդ դիտողութիւնների դժուար է ուղիղ ճանապարհի վրայ դնել ժողովրդական գրքերի հրատարակութիւնը։ Ռուսաց գրականութեան մէջ գտնւում են մինչև անգամ մի քանի մանրամասն ծրագիրներ այդպիսի նիւթեր հաւաքելու համար, ինչպէս օրինակ, և Պրուգաւինի, Րուբակինի և այլն։ Աչքի առաջ ունենալով այդպիսի պրօգրամներ, „Что читать народу?“ աշխատութեան պէս ուղեցոյցներ՝ մեր գաւառական ինտելիգենտ երիտասարդութիւնը կարող է հեշտութեամբ այդ խնդրում ուղիղ ճանապարհ գտնել, դնելով հարցերը մեր տեղական պայմաններին համեմատ։

Բացի Թիֆլիսից կան և մի քանի ուրիշ քաղաքներում հասարակաց գրադարաններ, ինչպէս Բաքու, Շուշի, Ախալցխա, իսկ մի քանի քաղաքներում, ինչպէս Ալեքսանդրապոլում, արծարծւում է նոցա բանալու հարցը։ Ցանկալի է որ այդ գրադարաններն էլ չը բաւականանան միմիայն գրքեր բաժանելով, այլ նաև հաւաքէին տեղեկութիւններ և դիտողութիւններ. այն ժամանակ այդ բոլոր նիւթերից աւելի որոշ գաղափար կարելի էր կազմել մեր թէ մանկական-ժողովրդական ընթերցանութեան և թէ ժողովրդի պահանջների ու աշխարհայեցողութեան մասին։

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑ